ՀՏԴ 371.31:809.198.1 Հայոց լեզվի դասավանդման մեթոդիկա

ՀԵՔԻԱԹԻ ԴԱՍԱՎԱՆԴՈՒՄԸ ՄԻՋԻՆ ԴՊՐՈՑՈՒՄ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑԱՅԻՆ (ԻՆՏԵՐԱԿՏԻՎ) ՈՒՍՈՒՑՄԱՄԲ

Միրա ՅԱՐԱՄԻՇՅԱՆ

Բանալի բառեր-*Ուսուցում,հեքիաթ, ինտերակտիվ (համագործակցային), Խթանում, Իմաստի ընկալում, Կշռադատում, բանավեճ, ամփոփում, խմբային համակարգ, բառային աշխատանք:*

Ключевые слова-*Обучение, сказка, интерактивные, продвижение, чувственному восприятию, обсуждения, дебаты, обобщить, групповой системы, лексическая работа.*

Key words- *Training , tale, interactive, promotion, sense perception, deliberation, debate, summarize, group system, lexical work.*

М.Ярамишян

Преподавание жанра сказки в средней школе на основе интерактивного метода обучения

В статье, согласно требованием новой общеобразовательной системы, рассматривается преподавание жанра сказки, в частности, в 5 классе, на основе интерактивного метода обучения, приводя конкретный пример предусмотренной программы, по разделу «С неба упало 3 яблока» по первой сказке «Не рой другому яму, сам в нее попадешь».

M.Yaramishyan

The Fairy Tale Genre Teaching on the Basis of the Interactive Method at Secondary School

The article deals mainly with the fairy tale genre teaching particularly in the fifth for on the basis of the interactive method of teaching on demands of the new educational system based on the example in accordance with the curriculum referring to the unit «Tree apples fell from the sky» and Chickens come home to roost ».

Համագործակցային ուսուցման ժամանակ սովորողները, համագործակցելով փոքր խմբերով, ձևավորում են ընդհանուր հասկացություններ և հմտություններ: Աշակերտները համագործակցային միջավայրում են կառուցում իրենց հմտությունները՝խոսելու, բացատրելու, բանակցելու, վիճարկելու և հարցեր տալու միջոցով:

Համագործակցային ուսուցումը իրականանում է համագործակցային դասի միջոցով, որը հիմնականում կազմված է տրամաբանորեն իրար հաջորդող վարժություններից: Դրանց կատարման ընթացքում միասին սովորելով և փորձարկելով, կիրառելով սոցիալական, ինքնաճանաչման և մտածողության հմտություններ՝ սովորողներն ակտիվորեն կառուցում են նոր գիտելիքներ և ձեռք են բերում ու զարգացնում նոր հմտություններ:

Ի՞նչ պետք է անի ուսուցիչը համագործակցային ուսուցում կազմակերպելու համար:

1.Անհրաժեշտ է դասագրքի նյութը, դասապլանները, դասապրոցեսները, առաջադրանքները կառուցել այնպես, որ սովորողները համագործակցելու կարիք ունենան:

2.Ուսումնական նյութը, ուսուցման մեթոդները համապատասխանեցնել կոնկրետ առարկայի, կոնկրետ դասարանի կարիքներին:

3.Հաշվի առնել այն խնդիրները, որոնք կարող են առաջանալ առանձին աշակերտների միջև՝ փորձելով միջամտել, կանխել հնարավոր ձախողումները, կոնֆլիկտները(հակասությունները):

4.Հաշվի առնել սովորողների խմբային և անհատական պատասխանատվությունը:

Համագործակցային ուսուցմամբ արդյունավետ դասավանդման կարևոր նախապայման է դասին հանգամանալից նախապատրաստվելը:Սա ենթադրում է նյութին մանրամասն ծանոթանալը և դասի ողջ ընթացքը պատկերացնելը: Թերևս ամենակարևորը դասի նպատակը հատուկ գիտակցելն է. ու՞ր ենք ուզում հասնել, ի՞նչ ուղիով, ի՞նչ միջոցներով:

Երբ անցում է կատարվում դասագրքում տրված տեքստի ուսումնասիրությանը, ապա ուսուցիչը առաջարկում է մտածել ավելի որոշակի թեմայի շուրջ: Օրինակ՝ հենց վերնագիրը զրույցի նյութ կարող է դառնալ: Աշխատանքը կարելի է կազմակերպել «Խթանում, Իմաստի ընկալում, Կշտադատում» կամ՝ ԽԻԿ համակարգի սկզբունքով: Այս համակարգը ոչ միայն սովորողի մտածողությունն է խթանում, այլև որոշակի հետաքրքրություն է մշակում կարդալու գործընթացի հանդեպ: Համակարգն իրականացվում է երեք փուլով՝

ա) Խթանում,
բ) Իմաստի ընկալում,
գ) Կշռադատում:

Առաջին՝ Խթանում փուլում անհատական որևէ առաջադրանք է տրվում կամ խմբային քննարկում է անցկացվում, որի ընթացքում նպատակ է դրվում վերհանելու սովորողների գիտելիքները, կարծիքները կամ անձնական փորձը այդ թեմայի շուրջ: Երբ այսպիսի առաջադրանք տրվում է՝ գրական երկի ուսումնասիրությունն սկսելուց առաջ, սովորողը հոգեբանորեն նախապատրաստվում է կարդալիք նյութի ընկալմանը:

Երկրորդ՝ Իմաստի ընկալման փուլում հաղորդվում է նոր նյութ: Կազմակերպվում է նոր նյութի ընթերցումը: Ընդ որում՝ թե' հինգերորդ, թե' վեցերորդ դասարաններում ուստարվա սկզբին խորհուրդ է տրվում բարձրաձայն ընթերցելը: Աշակերտներն ընթերցում են հատված առ հատված, իրար հաջորդելով: Պիտի աշխատել, որ յուրաքանչյուր երեխա կարողանա գոնե մեկ հատված կարդալ: Ավելի ուշ՝ ուստարվա ընթացքում, կարելի է հանձնարարել , որ կարդան ինքնուրույն, առանձին-առանձին, մտքում, եթե արդեն վարժ են կարդում, կամ էլ՝ առաջարկել, որ տանը կարդան, իսկ դասարանում կատարեն տեքստային տարաբնույթ աշխատանքներ:

Ընթերցելու ընթացքում՝ իր նշած համապատասխան տեղերում, ուսուցիչը խնդրում է կանգ առնել և հարցեր է տալիս դասարանին.« Ի՞նչ է լինելու հետո, ի՞նչ է անելու հերոսը, ի՞նչ կլինի, եթե…» և այլն: Այսինքն՝ ուսուցիչը բացահայտ ներգործություն չունի, բայց անուղղակի կերպով սովորողներին տանում է դեպի Խթանման փուլում առաջադրված վարկածների և տեքստում նկարագրվող դեպքերի, գործողությունների համադրման ճանապարհով: Սա սովորողների հետաքրքրությունը վառ պահելու, դասաժամին նրա գործուն մասնակցությունն ապահովելու միջոց է:

Երրորդ՝ Կշռադատման փուլում սովորողը հանրագումարի է բերում իր գիտելիքները, վերակառուցում է իր իմացածը կարդացածի ազդեցությամբ: Իսկ գրական երկը հնարավորություն է ընձեռում կարդացածի հիման վրա զարգացնելու նոր , արդեն սեփական վարկածները: Սովորողը ոչ միայն կարդացածն իր բառերով է վերարտադրում, նոր վերնագիր է առաջարկում կամ դեպքերի զարգացման իր տարբերակն է մշակում, այլև հանդես է գալիս մեկնաբանություններով և դատողություններով:

Կշռադատման փուլի կարևոր բաղադրիչներից է ամփոփումը կամ անդրադարձը, երբ սովորողը վերհիշում է դասի ընթացքում իր կատարած աշխատանքը և փորձում հասկանալ, թե ի՞նչ արեց և ինչու՞: Սա շատ կարևոր է. յուրաքանչյուր սովորող պիտի հստակ իմանա, թե ի՞նչ նպատակով է ուսուցիչն իրեն առաջարկում այդպիսի գործունեություն ծավալել: Բացի դրանից՝ աշակերտը հոգեբանորեն զգում է ուսումնական գործընթացում իր դերի կարևորությունը և անհրաժեշտությունը: Այդ պատճառով էլ ուսուցիչը դասի պլան կազմելիս հատուկ պիտի նշի թե' ուսուցանողի, թե' սովորողի նպատակները և գործողությունները դասի ընթացքում:

ԽԻԿ համակարգը հանդուրժողականություն, դիմացինին լսելու, ասածը հասկանալու կարողություններ է ձևավորում, նպաստում մտքերն ազատ և անկաշկանդ արտահայտելուն, ինչպես նաև զարգացնում է սովորողների ստեղծագործական մտածողությունն ու երևակայությունը:

Այս համակարգով աշխատանքը ցույց տանք հինգերորդ դասարանի մայրենիի դասընթացի «Երկնքից երեք խնձոր ընկավ» բաժնի հենց առաջին թեմայի ուսումնասիրության օրինակով՝«Ուրիշի համար փոս փորողը ինքը կընկնի մեջը»:

Առաջին՝ Խթանման փուլում ուսուցիչն առաջարկում է մտածել գրատախտակին կամ էլ ցուցապաստառին գրված ՝«Ուրիշի համար փոս փորողը ինքը կընկնի մեջը» նախադասության մասին: Հարկ չկա աշակերտներին շտապեցնելու կամ դանդաղելը ժամանակի կորուստ համարելու. պիտի թույլ տալ, որ երեխաները մտածեն, աշխատեն:

Հաջորդ քայլը մտքերի փոխանակության կամ գրառումներն ընթերցելու փուլն է: Եթե ուսուցիչը հանձնարարել է գրել այս թեմայի շուրջ, լավ կլինի որ ինքն էլ գրի, աշխատի սովորողների հետ: Այսպես վարվելով՝ուսուցիչը հոգեբանորեն շատ կարևոր խնդիր է լուծում. աշակերտն սկսում է ուսուցչին ընկալել իբրև գործընկերոջ, բացի դրանից՝ ավելի է կարևորում հանձնարարությունը:

Երբ բոլորը կարդան իրենց գրածները, ուսուցչի գրածը կծառայի որպես օրինակելի խոսքի նմուշ:

Խթանման փուլում չկան ճիշտ և սխալ մտքեր, կան տեսակետներ և կարծիքներ, որոնք բոլորն էլ հարգալից վերաբերմունքի պիտի արժանանան:Երբ բոլորն արդեն արտահայտվել են,սկսվում է հաջորդ՝ Իմաստի ընկալման փուլը:

Այս փուլում աշակերտներն սկսում են բարձրաձայն կարդալ հերթով՝ ժամացույցի սլաքի ուղղությամբ, որպեսզի տարբերություն չդրվի նրանց միջև: Հինգերորդ դասարանի դասագրքում այս հեքիաթը բաժանված է չորս մասի: Սա արված է այն նկատառումով,որ ընթերցանությունը հաճելի լինի ամենատարբեր կարողություններ և հմտություններ ունեցող աշակերտների համար, որպեսզի երկար տեքստը «չվախեցնի» որոշ աշակերտների, ինչպես նաև՝ ուսուցչին հնարավորություն տա աշխատելու տարբեր մեթոդներով:

Ընթերցման ժամանակ, երբ առաջին կարդացողը հասնում է առաջին մասի երկրորդ պարբերության ավարտին՝ «Որդիներն իրենց հորը առոք-փառոք թաղում են», ուսուցիչը խնդրում է կանգ առնել,այլևս գրքին չնայել, կամ գիրքը ժամանակավորապես փակել և պատասխանել հետևյալ հարցին՝ «Հետո ի՞նչ է լինելու ձեր կարծիքով»: Պատասխանների մի քանի տարբերակ լսելուց հետո շարունակում են կարդալ: Ուսուցիչը կարող է սովորողներին հմտորեն ներքաշել զրույցի ոլորտ՝ «գուցե»-ների իր վարկածներով. «Գուցե հայրը ունեցվածքը ուրիշին էր կտակել,քանի որ իր տղաները անբան էին» և այլն:

Հետո երկրորդ աշակերտը կարդում է առաջին մասի ավարտը. «Ինքն էլ սրա-նրա մոտ մշակություն է անում, հոտաղություն անում,օրը մի քանի կոպեկ աշխատում, բերում, ընտանիքը պահում»: Ուսուցիչը դարձյալ ընդհատում է և հարցնում. «Դեպքերի այսպիսի ընթացք ենթադրու՞մ էիք; Ի՞նչ կլինի հետո, ի՞նչ եք կարծում»: Տեսակետները լսելուց հետո շարունակում են ընթերցել… Եվ այսպես՝ երեխաների հայտնած վարկածները լսելով՝ հեքիաթը ընթերցվում է մինչև վերջ:

Երրորդ՝ Կշռադատման փուլում հիմնականում կատարվում է տեքստի մեկնաբանություն, նոր վարկածներ, դեպքերի, գործողությունների նոր ընթացք, նոր հերոսի ներմուծում և հեքիաթի ինքնատիպ շարադրանք նույն կամ սեփական վերնագրով:

Կշռադատման փուլում ուսուցչին կօգնեն դասագրքի «Տեքստային աշխատանք» բաժնի հարցերն ու առաջադրանքները:Ուսուցչի հայեցողությամբ «Բառային աշխատանք» բաժնի առաջադրանքները կարելի է կատարել տեքստի քննությունից հետո:

Հեքիաթի ամփոփումը կատարվում է դասարանին տրվող ինքնուրույն կամ խմբային առաջադրանքներով՝

ա. գտնել և դուրս գրել հեքիաթի վերնագրի նման արտահայտությունները, նախադասությունները, այսինքն՝ առածներ և ասացվածքներ

բ. վերհիշել նմանօրինակ բովանդակությամբ հեքիաթներ, պատրաստվել ներկայացնելու դասարանի ուշադրությանը

գ. նույն վերնագրով հեքիաթ հորինել:

Ուսուցիչը միշտ պետք է հիշի, որ չի կարելի բոլոր աշակերտներին նույն տնային հանձնարարությունը տալ:Նա այստեղ ևս պիտի շերտավորված մոտեցում հանդես բերի:Օրինակ՝ հեքիաթ հորինել ամեն մեկը չի կարող,այդ պատճառով էլ հարկ է շատ զգույշ լինել և այդօրինակ առաջադրանք տալ ոչ թե համատարած բոլոր աշակերտներին, այլ միայն դրան ունակներին:

Գրավոր աշխատանքի դասը ևս կարելի է կազմակերպել խմբային համակարգով:Դասագրքերում գրեթե միշտ թե' բառային և թե ' տեքստային աշխատանքներից հետո առաջարկվում է որևէ շարադրություն գրել: Ինչ որ բան գրելը հեշտ գործ չէ, և չի կարելի երեխային մենակ թողնել այդ դժվար աշխատանքը կատարելիս: Հատկապես ուսումնական տարվա սկզբում, երբ սովորողն այնքան էլ վարժված չէ իր մտքերն ազատ շարադրելու և ստեղծագործելու, ուսուցիչը տվյալ տեքստի, գրական երկի Կշռադատման փուլը կարող է կազմակերպել դասարանում՝ գրավոր աշխատանքի ձևով:

«Ուրիշի համար փոս փորողն ինքը կընկնի մեջը» հեքիաթին հաջորդող գրավոր աշխատանքի ժամին ուսուցչին և աշակերտներին կարող են օգնել դասագրքի «Տեքստային առաջադրանք» բաժնի առաջադրանքները: Օրինակ՝ 2-րդ առաջադրանքում հանձնարարվում է «Ավարտի'ր դեպքերի նկարագրությունն ըստ հեքիաթի»: Այդ առաջադրանքը կարելի է ամբողջացնել հետևյալ կերպ.

1. Մի հարուստ մարդ մեռնում է:
2. Նրա ավագ որդին զավթում է հոր ունեցվածքը:
3. Նա փոքր եղբորը զրկում է ունեցվածքից:
4. Մեծ եղբայրը դուրս է անում փոքրին:
5. Փոքրը մի հացատուն է վարձում:
6. Փոքր եղբայրը սկսում է մշակություն անել:
7. Մեծ եղբայրը որոշում է կործանել իր փոքր եղբորը:
8. Նա փոքրին ճանապարհում է հեռու մի տեղ:
9. Փոքրը հարստանում է:
10.Մեծ եղբայրն էլ է գնում նույն տեղը:
11. Գազանները նրան հոշոտում են:

Այսպիսի առաջադրանքի կատարումը սովորեցնում է պահպանել մտքերի հաջորդականությունը, տեսնել դեպքերի պատճառահետևանքային կապերը:Սկզբնական շրջանում կարելի է պարզապես միասին շարադրել դեպքերը՝ ըստ վերոհիշյալ պարզ նախադասությունների, իսկ հետո առաջադրանքներն աստիճանաբար բարդացնել և սովորողներին ստեղծագործական և վերլուծական բնույթի աշխատանքների համար նախապատրաստել, վարժեցնել և հմտացնել:

Վերոհիշյալ հեքիաթին հաջորդող «Բառային աշխատանք» բաժնի կետերը պարտադիր չէ ամբողջ դասարանով կատարել:Կարելի է աշակերտներին բաժանել խմբերի և այդպես խմբերով աշխատեցնել: Խմբերով աշխատելը ուսուցման կազմակերպման ձև է,որը հնարավորություն է տալիս համագործակցելու, ընկերներին հաղորդելու իր իմացածը, նրանց տրամադրության տակ դնելու իր գիտելիքներն ու փորձը:

Քննարկենք մեր հեքիաթին հաջորդող «Բառային աշխատանք» բաժնի առաջադրանքների խմբային եղանակով կատարում:

Այդ առաջադրանքները տարաբնույթ են, թվով՝ տասը: Ուսուցիչը դասարանը բաժանում է ինը խմբի (եթե, իհարկե,դասարանի աշակերտների թիվը թույլ է տալիս), իսկ 10-րդ առաջադրանքը դեռ պիտի թողնել:

Առաջին խումբը պիտի կատարի առաջին կետը՝ «Բառարանում գտիր կարմիր գրված բառերի բացատրությունը և գրառիր բառատետրում»: Բառերի բացատրությունը հարկավոր է գտնել դասագրքի հավելվածում տրված բառարանում, կամ էլ, եթե դասարանում կան դպրոցական բառարաններ, խումբը կաշխատի դրանցով: Այս առաջադրանքը կատարողները իրենց գործը ավարտելուց հետո,մինչ մյուս խմբերը աշխատում են, բառերի բացատրությունները գրառում են գրատախտակին,որպեսզի ուսուցչի համապատասխան ցուցումից հետո գրանցեն իրենց բառատետրերում:

2-րդ խումբը պիտի տեքստից գտնի տեքստից հանված հոմանիշները:Այս կարգի աշխատանքներ կատարելիս ևս օգտակար կլինի դասագրքի բացատրական բառարանը. որոշ բառեր բացատրվում են իրենց հոմանիշների միջոցով:

Այն խումբը, որը կատարում է 4-րդ առաջադրանքը, կա'մ պետք է աշխատանքը շարունակի տանը, կա'մ էլ ուսուցիչը նախօրոք պիտի պատրաստի համապատասխան տեղեկատվական նյութ **մարգարիտ** քարի մասին:

Այսպես բոլոր խմբերը հանձնարարություններ են ստանում, ուսուցիչը նշում է ժամանակը, ապա անցնում է խմբից խումբ, հետևում նրանց աշխատանքի ընթացքին:Նա միջամտում է միայն այն դեպքում, երբ նկատում է, որ որևէ խումբ չի կռահում, թե ինչից սկսի և ինչպես աշխատի:

Ժամանակը լրանալուց հետո յուրաքանչյուր խումբ հերթով, իր մեկ խոսնակի միջոցով դասարանի ուշադրությանն է ներկայացնում կատարած առաջադրանքը:

Դասագրքերի առաջադրանքները կատարելու այս եղանակը բոլոր հարցերին անդրադառնալու, ինչպես նաև աշակերտներին հենց դասաժամին աշխատեցնելու հնարավորություն են տալիս:

Ինչ վերաբերում է դասագրքի 10-րդ առաջադրանքին, ապա այն այսպես է ձևակերպված. «Ուշադիր լսի'ր, թե ինչպես են խոսում քո շրջապատի մարդիկ:Ո՞ւմ խոսքն է քեզ առավել դուր գալիս:Ինչու՞»: Այս հարցին գրավոր պատասխան է ակնկալվում: Առաջադրանքի կատարման համար կարելի է մի քանի օր ժամանակ տալ, այն հանձնարարել կա'մ որևէ ցանկացողի, կա'մ էլ

լեզվական հակումներ ունեցող աշակերտի:Ուսուցիչը առանձին աշխատում և օգնում է այդ սովորողին, իսկ հետո էլ հատուկ օր է նշանակում, որ անհատական հանձնարարություն ստացած աշակերտը ելույթ ունենա դասարանի առջև: Նախապես աշակերտներին հանձնարարում է, որ պատրաստվեն «Ինչպե՞ս են խոսում իմ շրջապատի մարդիկ» թեմայով բանավեճի:

Բանավեճի մեթոդը խիստ արդյունավետ է.այն մարդուն սովորեցնում է հարգալից վերաբերմունք դրսևորել դիմացինի հայտնած կարծիքի հանդեպ,քննադատել ոչ թե մարդուն, այլ գաղափարները:Այս դասարանում, իհարկե, դեռ վաղ է խոսել գիտականորեն հիմնավորված բանավեճ անցկացնելու մասին, սակայն կարելի է կիրառել, քանի որ այս մեթոդը խթանում է գիտելիքի ձեռքբերում:Բանավեճը նաև հնարավորություն է ընձեռնում ճիշտ և մատչելի ձևակերպելու սեփական գաղափարները, ինչպես նաև՝ դրանք պաշտպանելու և ամրապնդելու:

Բանավեճի մեթոդի կիրառումը ուսուցչից բավական վարպետություն և ճկունություն է պահանջում: Այս մեթոդով աշխատելիս ուսուցչի հիմնական զենքը հարցերն են: Նա պիտի կարողանա հետաքրքիր հարցեր ձևակերպել, որպեսզի շարժի աշակերտների միտքը, նրանց մղի մտածելու, դատելու, տրամաբանելու և եզրահանգումներ անելու:

Եվ այսպես,հեքիաթի տեքստի ընթերցումից, բառային և տեքստային առաջադրանքներ կատարելուց հետո ուսուցիչը աշակերտների հետ անցնում է տվյալ թեմային համապատասխան լեզվական նյութի ուսումնասիրությանը:Այստեղ ևս նա կարող է կիրառել ԽԻԿ համակարգը, մանավանդ որ թեմայի համար կան մուտքի հարցեր կամ առաջադրանքներ: Օրինակ՝ դասագրքի 26-րդ էջում առաջարկվում է «Գիտե՞ս, թե ինչ է ուղղախոսությունը, իսկ ուղղագրությո՞ւնը: Ո՞րն է այս բառերի առաջին բաղադրիչը: Դրանով բառեր կազմիր»:

Առաջադրանքի կատարումը կարելի է սկսել վերջից,այսինքն՝ բառակազմական վերլուծությունից: Իսկ ուղիղ արմատով բառերը կարելի է գրատախտակին գրել տալ: Հաջորդ քայլին ուսուցիչն աշակերտներին բաժանում է խմբերի և առաջարկում քննարկել, թե ինչ է ուղղախոսությունը և ուղղագրությունը: Գրատախտակին աղյուսակ է գծում, մեկի կենտրոնում գրում է «Ուղղախոսություն», մյուսում՝ «Ուղղագրություն»: Որոշակի ժամանակից հետո, երբ աշակերտները ավարտել են քննարկումները, ուսուցիչն առաջարկում է խմբերից մեկական ներկայացուցիչ ուղարկել և գրառումներ կատարել աղյուսակներում՝ հակիրճ նշելով, թե ինչ են մտածում նրանց մասին: Դրանից հետո աշխատանքային տետրերում ինքնուրույն կատարում են տեսական նյութի բացատրության ընթացքում տրվող առաջադրանքները և լրացնում են շարքերով (էջ 27): Ուսուցիչը կհուշի, որ այդօրինակ բառերը աշակերտները կարող են գտնել «Ուրիշի համար փոս փորողը ինքը կընկնի մեջը» հեքիաթից: Սա հնարավորություն կտա մեկ անգամ էլ անդրադառնալու հեքիաթի բնագրին և աշխատելու, բայց արդեն լեզվական կողմը քննելով:

Գրականություն

1.Գյուրջինյան Դ.,Ալեքսանյան Թ.,Գալստյան Ա. -Մայրենի-5,Երևան,2011թ.
2.Գյուրջինյան Դ.,Ալեքսանյան Թ.,Գալստյան Ա. -Մայրենի-6,Երևան,2011թ.
3. Գյուրջինյան Դ.,-Մայրենի-5-6,մեթոդական ուղեցույց, Երևան,2011թ.

Տեղեկություններ հեղինակի մասին.
Միրա Յարամիշյան-մ.գ.թ.,դոցենտ,ակ.Ս.Աբրահամյանի անվան հայոց լեզվի ամբիոն
E-mail mira yaramishyan@mail.ru

Հոդվածը տպագրության է երաշխավորել խմբագրական կոլեգիայի անդամ, բ.գ.դ., Ս.Խանյանը: